Նանա Իոսելիանի
Սոփիո Քեբուրիա

Արվեստ 8



Երաշխավորվել է Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից, 2020 թվականին:

 სულაკაურის
გამომცემლობა

Արվեստ 8

Աշակերտի գիրք

 სულაკაურის
გამომცემლობა

Բովանդակություն

2 Մարդը արվեստում



Լեոնարդո դա Վինչի, «Վիտրուվիացի մարդը», 1490-1492 թ.

	Մարդը տիեզերքի կենտրոնում	7
1.	Մարդ հումանիստը	8
2.	Ո՞վ է վերադարձրել մարդուն ծավալը:	12
3.	Մարդը Վերածննդի դարաշրջանի քանդակում	18
4.	Բարձր Վերածնունդ	24
5.	Ավարտի սկիզբը	36
6.	Մարդը Հյուսիսային Եվրոպայի Վերածննդում	46
7.	Արվեստն ընդդեմ անխոհեմության	52
8.	Զգացմունք և հույզ	60
9.	Բնավորություն և դիմախաղ	70
10.	Հոգեբանական դիմանկար	74
11.	Կամերային և հանդիսավոր դիմանկար	86
12.	Բարոկկոյի դարաշրջանի մարդը	100
13.	Խմբակային դիմանկար	104
14.	Ինքնադիմանկար	114
15.	Մարդու կեցությունը	126
16.	Ի՞նչ է մեզ պատմում հագուստը	140

3 Շրջակա միջավայրը և արվեստը

Անրի Մատիս, Նատյուրմորտ պատուհանի մոտ: 1922 թ.

	Աշխարհը մեր շուրջը	151
1.	Նատյուրմորտ կամ շրջակա միջավայր մոտ տեսարանով	152
2.	Բնանկար կամ շրջակա միջավայր հեռավոր տեսարանով	159
3.	Հեռանկար	164
4.	Փրկությունը բնության մեջ է	170
5.	Ճարտարապետություն	174
6.	Ճարտարապետությունը և շրջակա միջավայրը	182
7.	Կլիման և ճարտարապետությունը	186
8.	Ճարտարապետության գեղարվեստական լեզուն	190
	Վերջաբան	196
	Բառարան	197

2 Մարդը արվեստում



Լեոնարդո դա Վինչի, «Վիտրուվիացի մարդը», 1490-1492 թ.

«Մարդն ամեն ինչի չափիչն է»:
Հին հույն փիլիսոփա Պրոթագորաս

Մարդը տիեզերքի կենտրոնում

- Ինչպե՞ս են մարդիկ օգտագործում արվեստն ինքնարտահայտման համար:
- Ինչպե՞ս էին տարբեր դարաշրջանների արվեստում պատկերում մարդուն:
- Ինչպե՞ս են ժամանակի ընթացքում փոխվել պատկերավորման սկզբունքները՝ մարդուն շրջապատող աշխարհի նկատմամբ վերաբերմունքի, արտաքին տեսքի, գաղափարների, զգացմունքների, բնավորության, հետաքրքրությունների, նրա սոցիալական վիճակի, բնակման միջավայրի և առօրյա կյանքի փոխանցման համար:
- Ինչպե՞ս կարող եմ պատկերավորման տարրերն ու սկզբունքներն օգտագործել իմ գաղափարները, զգացմունքները, բնավորությունը, հետաքրքրությունները, սոցիալական վիճակը, բնակման միջավայրը և առօրյա կյանքը փոխանցելու համար:

Մարդու առաջին պատկերներից մեկը հայտնաբերվել է նախապատմական ժամանակների Լասկոյի քարանձավում: Այնտեղ պարզ, հասարակ գծերով, բիզոնի եղջյուրներից վիրավորված որսորդ է պատկերված: Դրանից հետո անօգնական մարդը թրծվեց բազմաթիվ մարտահրավերների դեմ պայքարում և աստիճանաբար աշխարհի տիրակալը դարձավ: Մարդը ճանաչում է իրեն, միշտ զարգանում է, ձգտում կատարելության:

Ինչպիսի՞ն էր այդ մարդը հնում: Ինչպիսի՞ն է այսօրվա մարդը: Այդ մասին մեզ պատմում է արվեստը:

Արվեստն այն զենքն է, որով կարող ես հավանություն տալ մարդու վարմունքին, նույնիսկ դիտողություն անել, գովել նրան և նույնիսկ քննադատել, նրա թաքնված ապրումները բացահայտել ուղղակիորեն կամ անուղղակիորեն: Եկեք տեսնենք, թե ինչպես են դա արել մեր նախնի արվեստագետները:

1. Մարդը հումանիստը



«Ադամի արարումը» , Միքելանջելո,
Սիքստինյան կապելլա, 1512 թ.

Մարդու հայացքները ժամանակի ընթացքում փոփոխվում են: Մարդը աստիճանաբար ճանաչում է աշխարհը և սեփական տեղն այս աշխարհում: Նա մե՛րթ ներդաշնակ է շրջապատող աշխարհի հետ, մե՛րթ՝ հակասության մեջ: Կերպարվեստը պատկերում է այս դժվար ճանապարհը:

Մեր պատմության սկզբից մինչ օրս միայն երկու դարաշրջանում էր համարվում մարդը տիեզերքի կենտրոնում: Դրանք են՝ Հին Հունաստանը և հումանիստական Վերածնունդը: Դարեր են բաժանում այս երկու դարաշրջաններն իրարից: Դրանց միջև ընկած ժամանակաշրջաններում բոլորովին այլ տեսակետներ էին տիրում: Ի վերջո, միևնույն է հաղթեց մարդու ձգտումը ազատ ստեղծագործության:

Վերածննդի դարաշրջանի պայմանական պարբերականացում

XIII-XIV դդ.
Նախավերածննդյան

XV դարի II կես
Բարձր Վերածնունդ

XV դարի I կես
Վաղ Վերածնունդ

XVI դար
Ուշ Վերածնունդ

«Վերածնունդ» բառը ֆրանսերեն նշանակում է կրկին ծնվել՝ վերածնվել: Ուրեմն ինչո՞ւ է Իտալիայում սաղմնավորված երևույթը այս ֆրանսերեն անվանումով կոչվել և ոչ թե՝ իտալերեն՝ «Ռանաշիմենտո»: Որովհետև դարի «կնքահայրը»՝ XIX դարի պատմաբան Ժյուլ Միշլեն ֆրանսիացի էր:

Վերածնունդը սկսվեց Իտալիայում, և դա բազմաթիվ պատճառներ ունի:

1. 1453 թվականին Բյուզանդական կայսրության անկման հետևանքով Բյուզանդիայից Եվրոպայում վերաբնակված փախստական հույները հետները տարան գրքեր և իրենց մշակույթի խորը իմացություն:

2. Իտալական Ֆլորենցիա և Վենետիկ քաղաքները վերածվեցին կարևոր առևտրային կետերի և զարգացան տնտեսապես:

3. Ֆլորենցիայի ազնվական Մեդիչիների տոհմը այստեղ հիմնեց առաջին բանկը: Նրանք մեծ գումարներ էին ծախսում, որպեսզի իրենց կենցաղը գեղեցկացնեին շքեղության իրերով: Մեդիչիների արքունիքում գործում էին լավագույն արվեստագետներ:

Իտալիան հարստացավ և սկսեց կրթվել: Աշխարհի հնագույն Բոլոնիայի համալսարանում հունարեն էր դասավանդվում: Իտալացիները հին հույն փիլիսոփաների մտքերը կարողացան բնօրինակով կարդալ և լատիներեն թարգմանեցին: Այս փաստը մեծ դեր է կատարել վերածննդյան հումանիզմի սաղմնավորման մեջ:

Իտալացիները սկսեցին հին հույն ու հռոմեացի գիտնականների միտքը և արվեստագետների նվաճումները վերաիմաստավորել: Մարդու նկատմամբ հնագույն աշխարհի վերաբերմունքը վերածննդյանին մոտ էր: Հույն հերոսը, ով իր քաղաք-պոլիսի բարեկեցության համար առավոտյան պալեստրայում՝ մարմնամարզական դպրոցում է մարզվում, երեկոյան փիլիսոփայություն սովորում և մասնակցում քաղաքի ճակատագրի վճռմանը, իրեն զգում է որպես արժանավայել քաղաքացի: Միջնադարյան Իտալիայի մեծ քաղաքները Հռոմից անկախ քաղաք-հանրապետություններ էին: Անկախության զգացողությամբ տոգորված բազմակողմանի մարդը, որը միաժամանակ և՛ ճարտարապետ է, և՛ ճարտարագետ, և՛ գյուտարար, նկարիչ, քանդակագործ, գրող և հետազոտող, իրեն նաև զգում է սեփական կյանքի տերն ու տիրականը: Իր գիտելիքների

Բոլոնիայի համալսարանը

շնորհիվ նա կարող է բազմաթիվ հարցեր լուծել: Վերածննդյան հումանիզմը անձնական ազատությունը հռչակում է որպես հիմնական արժեք: Հնագույն դարաշրջանից հետո մարդը կրկին հավատաց իր մտավոր, ստեղծագործական և ֆիզիկական կարողություններին:

Կրոնական տեսարաններում իտալացի պատվիրատուն այնպես համարձակ, ինքնավստահ և անհոգ է կանգնած Քրիստոսի կողքին, ինչպես լավ ծանոթը: Նրանց միջև ոչ մի մասշտաբային տարբերություն չկա: Եվ ոչ միայն, շուտով Փրկչի և սրբերի գլխավերևից անհետանում է լուսապսակը, և նրանք մեզ են ներկայանում որպես սովորական մարդիկ: Փոխարենը, նկարներում հայտնվում է այնպիսի բան, ինչը մինչ այդ երբեք չէր եղել քրիստոնեական արվեստում՝ գետնին ընկած ստվերը: Նկարիչները կրոնական տեսարաններում նույնիսկ համարձակվեցին ինքնադիմանկարներ ներառել: Թե ինչպես նորովի մտածողության համաձայն փոխվեցին պատկերավորման տարրերն ու սկզբունքները, այդ մասին կիմանաս ավելի ուշ:

Մազաչչո, «Հրաշք՝ ստատիրով», Բրանկաչչի կապելլա, 1425 թ., **դետալ**



Լեոնարդո դա Վինչի, «Խորհրդավոր ընթրիք», 1490-ական թթ.

1 Դատողությո՛ւն արա

- Ինչպես է արվեստում արտացոլվում մարդու հավատն ու պատկերացումն աշխարհի մասին:
- Ի՞նչի մասին է խոսում գետնին ընկած ստվերը:
- Ինչո՞ւ միջնադարում՝ մինչև Վերածննդի դարաշրջանը, չէին նկարում սրբերի ստվերը:
- Ի՞նչ է նշանակում լուսապսակը կամ նրա բացակայությունը:
- Ինչպե՞ս է փոխվել մարդու նկատմամբ վերաբերմունքը Վերածննդի դարաշրջանում:
- Ինչ եք կարծում, պատկերավորման ինչպիսի՞ տարրեր ու սկզբունքներ են «համապատասխանում» ժամանակակից աշխարհի արտացոլմանը:

2 Հարցեր

- Ի՞նչը «վերստին ծնվեց» Վերածննդի դարաշրջանում:
- Ինչպիսի՞ն է մարդու հին հունական իդեալը:
- Ի՞նչ է նշանակում վերածննդյան հումանիզմը:
- Ո՞ր գործոններն են պայմանավորել Իտալիայում հումանիզմի սաղմանավորում:

3 Տեղեկություն պատմությունից

Ֆլորենցիան Վերածննդի դարաշրջանի մշակութային վերելքի կարևորագույն կենտրոններից մեկն է: Դրանում մեծ ներդրում ունի Մեդիչիների տոհմը: Մեդիչիները մեկենասներ էին: Նրանք հովանավորում էին նկարիչների, բանաստեղծների, փիլիսոփաների և այլն: Այս բանկիրների ազդեցության տակ հայտնվեց քաղաքի ռազմական, տնտեսական և մշակութային կյանքը: Մեդիչիների իշխանությունը դուրս էր եկել Ֆլորենցիայի սահմաններից: Տոհմի չորս ներկայացուցիչներ դարձել են Հռոմի պապ, իսկ Եկատերինա և Մարիա Մեդիչիները Ֆրանսիայի թագուհիներ էին:

Բոտիչելլի, Մեդիչիների ընտանիքը, «Մոգերի երկրպագություն», 1475 թ.

Բառարան

Դուչենտո, տրեչենտո և այլն – չենտո իտալերեն 100 է նշանակում: Դուչետոն 1200-ական, տրեչենտոն – 1300-ական, կվատրոչենտոն – 1400-ական, իսկ չինկվեչենտոն – 1500-ական թվականներ:

Հումանիզմ – հայացքների համակարգ XIV-XVI դարերի Իտալիայում, ըստ որի՝ մարդու բնավորությունը կարելի է կատարելագործել հնագույն մշակույթի ուսումնասիրության միջոցով: Հումանիստները հավասարապես հետաքրքրվեցին մարդու հոգևոր ու մարմնավոր կարիքներով:

2. Ո՞վ է վերադարձրել մարդուն ծավալը:

Պրոտո-Վերածննդի դարաշրջանը դեռ սերտորեն կապված է միջնադարյան սրբանկարչական ավանդույթների հետ:

Դուչչոյի սրբապատկեր «Մաեստա», Ուֆֆիցի պատկերասրահ, Ֆլորենցիա, XIII դ.

Ջոտտոյի սրբապատկեր, «Մադոննա Օնիսանտի», 1310 թ.

Դուչչոյի (1240-1302) «Մաեստային» և Ջոտտո դի Բոնդոնեի «Մադոննա Օնիսանտիին» իրարից բաժանում է կարճ ժամանակահատված: Դուչչոն համարվում է Ջոտտոյի ուսուցիչը: Այնպես, ինչպես Պրոտո-Վերածննդի դարաշրջանի մյուս նկարիչները, Դուչչոն բյուզանդական սրբանկարչության ավանդույթների հավատարիմն է:

1 Դատողությո՛ւն արա

Հիշի՛ր բյուզանդական պատկերավորման նշանները և բնութագրի՛ր Դուչչոյի «Մաեստան»:

Ջոտտո դի Բոնդոնեն Վերածննդի դարաշրջանի առաջին ծիծեռնակն է, գեղանկարչության նորարար և բարեփոխիչ: Նա նկարչության մեջ իսկական հեղաշրջում կատարեց: Ճիշտ է, նրա կերպարները դեռ առանց գետնին ընկած ստվերների են պատկերվում, բայց պատկերն արդեն ծավալ է ձեռք բերել, «միս ու արյուն» ու կշիռ ստացել, ծանրացել: Հագուստի պլաստիկ ծալքերի տակ զգացվում են մարմնի փափուկ, հոծ ձևերը: Ջոտտոյի «Մադոննա Օնիսանտին» արդեն իրական կին է:

Ջոտտո դի Բոնդոնե, Հովակիմի երազը

Ջոտտոյի ֆիգուրները ամուր կանգնած են գետնին: Երևաց նաև բնանկարը: Սակայն, և՛ ժայռը, և՛ ծառը, և՛ թփերը դեռևս բեմական դեկորացիայի նման արհեստական են: Շրջակա միջավայրն արդեն եռաչափ տարածություն է:



Ջոտտո, «Մուտք Երուսաղեմ», Սկրովենյի կապելլա, որմնանկար, Պադուա

Ջոտտո, «Հուդայի համբույրը», Սկրովենյի կապելլա, որմնանկար, Պադուա

Ջոտտոն կրոնական բովանդակության դրվագները մեզ այնպես է ներկայացնում, կարծես թե իր աչքերով է տեսել, կարծես ինքն է եղել Քրիստոսի Ծննդյան, հրաշքների կամ չարչարանքների ականատեսը: Գործողությունը թատրոնի բեմի նման նեղ հատվածներում է բացվում: Սրբանկարչությանը բնորոշ ոսկեգույն կամ այլ գույնի ֆոնին փոխարինեց լեռների, սարերի, քաղաքի և երկնքի տեսարանը:

Կերպարներն իրական, հողեղեն, համոզիչ և բնութագրական դարձան՝ այնպիսիք, ինչպիսիներին Ջոտտոն ամեն օր հանդիպում էր փողոցներում: Առաջացավ անկեղծ, մարդկային զգացմունք, կնճիռներ՝ տարեց մարդկանց դեմքին, դիտողին մեջքով կանգնած պատկերներ: Ճիշտ այնպես, ինչպես մենք տեսնում ենք աչքի առաջ «խաղարկված» իրավիճակը: Առաջացավ իրական, երկրային կյանքի նկատմամբ հետաքրքրություն:

Սկրովենյի կապելլա, Պադուա (դետալ)



Ֆլորենցիա, Սանտա Կրոչե, Բարդի կապելլա, դետալ

Ջոտտոն չունի անատոմիայի բավարար չափով գիտելիքներ, որպեսզի պատկերները և նրանց շարժումները ճշգրտությամբ փոխանցի, բայց նրա կողմից հայտնաբերված նորությունները բավական էին, որպեսզի հզոր ազդակ հաղորդեին ապագա արվեստագետներին: Ջոտտոյի գործընկերները սկսեցին որոնել աշխարհն իրատեսորեն փոխանցելու գեղարվեստական սկզբունքներ:

2 Արվեստանոց

Լուսաստվերը և ծավալը

1. Առանձին թերթի վրա ձեռքդ վարժի՛ր տարբեր ուղղությունների և մգության նրբագծեր նկարելու մեջ:





2. **Նկարի՛ր գունդ.**

- Արագ շարժումով շրջան գծի՛ր: Չփորձես նրա ձևը ուրվագծային գծով իդեալի հասցնել: Այս թերությունը ավելի ուշ կուղղվի նրբագծերով:
- Շրջանի վրա թույլ նշի՛ր այն տեղը, որը քո երևակայության մեջ պետք է լինի ամենալուսավորը: Այդ հատվածը կթողնես սպիտակ:
- Որտե՞ղ կլինի ամենամութ հատվածը: Որտե՞ղ է ընկնելու առարկայի ստվերը:
- Թեթև նրբագծի՛ր այս տեղերը: Դրանից հետո աստիճանաբար մգեցրո՛ւ:
- Նրբագծելու ժամանակ հենց նրբագծերով էլ ուղղի՛ր գնդի ձևը:
- Նկատի՛ ունեցիր՝ առավելագույն մգության կարելի է հասնել երկու եղանակով.

1. Կամաց-կամաց: Շերտ առ շերտ՝ թեթև նրբագծերով մգեցնել: Այս դեպքում առարկայի ծավալին կհասնես տոնայնության հավասար աստիճանավորմամբ:
2. Հենց սկզբից մատիտը սեղմելով առավելագույն մգության նրբագծերով նկարել, իսկ հաջորդ՝ բաց գույները յուրաքանչյուր հաջորդ հատվածը մատիտին համեմատաբար պակաս սեղմելով նկարել: Այս դեպքում տոնային աստիճանավորումը կոպիտ, սուր, գուցե նույնիսկ անկյունային ստացվի: